# ՀԱՆԴԷՍ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

---

## ԵՒՐԻՊԻԴԵԱՑ

## ԱՂԵՐՍԱԽՈՐՔ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես Պր. Ա. էջ 76)։

ԱԴՐԱՍՏՈՍ. ԹԵՍԵՒՍ՝ ընդ բազմաթիւ զօրակա- նօքն որ բարձեալ բերեն զդիակունս խաղաղ ռազմացելոց. ՊԱՐ.

ԱԴՐԱՍՏՈՍ

Աշխարանս, ով դուք մարք,
Ի ստորմէս մեռելոց՝
Ողբացէք, կրկնեցէք
Հեծութեանց իմ զանգիւնս։

ՊԱՐ

Ո՜վ մանկունք, մարց սիրուն
Ո՜վ յորդորջումն դառնութեան,
Ընդ եղ մեռելոց իմ, կարդամ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ա՜հ. ա՜հ։

ՊԱՐ

Վա՜յ չարեացս՝ որ հասին։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ա՜հ. լքեալս . . . . . .

ՊԱՐ

. . . . . . . . .

ԱԴՐԱՍՏՈՍ

Ո՜հ վշտացս։

ՊԱՐ

Կրեցի, ո՜հ. զդառնագոյնն։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ո՜վ քաղաք արգոսական, ընդարդ իմ ո՛չ տեսանես։

ՊԱՐ

Տեսանէ և զիս ընդհէքս՝
Անզաւակ զոլ յորդեկացս։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ածէք այսրէն ընդհերացեալ
Արիւնըռուշտ մարմնոց իրանս,
Ցանարժանից զուր մեռեալս։

ՊԱՐ

Տուր 'ի գիրկս իմ բազկաց
Պընդել զնոսին ընկըրծովքս,
Եդից 'ի գոգս իմ զորդիս։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ահա որդեակքդ։

ՊԱՐ

Որպէսք յոյժ ծանրաբեռն։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ո՜վ վատշուէքը։

ՊԱՐ

. . . . . . . . . . . . . .

ԱԴՐԱՍՏՈՍ

Իմիյ ծնյնիս լըւարուք։

ՊԱՐ

Աշխարհս արդ զերկոցունց իւն ընդհէրս։

ԱԴՐԱՍՏՈՍ

Իցիւ թէ իմ 'ի դընդից կողմանց անկեալ էր աստղատ

ՊԱՐ

Անփորձ թէ լինէր մարմնն իմ առն անկողնոյ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ի ծով վշտացս, ով դուք մարք,
Հայեցարուք, եղկելիք։

ՊԱՐ

Ակոսեալ այտք մեր եղընգամբք,
Ցանեալ փոշւովք ընդգըլուխս։

ԱԴՐԱՍՏՈՍ

Կլլանիցէ զիս երկիր,
Մըրրիկ ընդ օդս հանցէ զիս,
Շանթ տառածոյն հարցէ զիս։

ՊԱՐ

Ի դառն ածար անկողինս,
Հակառակ քեզ պատգամք դից.
Աշխարհաբեր Կատողին՝
Զէդիպոսի թողեալ տուն
Ցարձակեցաւ 'ի քո յարկ։

ԹԵՍԵՒՍ

Հարցանել ձեզ կամ էր ինձ զորմէ կոծիքդ արտասուօք.
Այլ թողեալ ընձեզ 'ի վիշտս՝ հարցից ինքնին զԱդրաս-
Ո՛յք ոմանք մեծահոգիք էին սոքա հոյակապք, (տոս.
Ո՛ւստ ուստեք 'ի մարդկանէ, ոգեա 'ի մէջ պատանեաց
Քաղաքիս իմաստնագոյնդ, որպէս իցես իւրկ գիտուն։
Զարութիւնս տեսի նոցա անճառելի քան ընդան,
Ցանդըզգունս՝ որոց եդեալ էր քաղաքին առնուլ։
Ոչ անշուշտ ծիծաղեցիս զինև թէ ինչ մի հարցից,
Ո՛ւմ անցնիւք ոք 'ի սոցունց եւ ախոյեան 'ի կըռուի,
Կամ յումէ վէրս զեղարդեան 'ի թշնամեաց խոցեցաւ։
Բանք ունայնք են այսոքիկ 'ի լուր տառօղ ականջաց,
Զի զիա՞րդ՝ որ 'ի ռազմին խառնեալ կայցէ զիրկընդխառն՝
Զառաջեաւ աչաց ընտեսլթերիցս տեսեալ նիզակաց,
Ի վերայ հասցէ ճըշդիւ թէ ո՛ հըզօրն 'ի նոսա

digitised by A.R.A.R.@

Զայրանիկ և ոչ գամ մի հարցանել իշխէի ,
Ոչ բանից իսկ զրուցողաց հաւատայի ինչ արդեւք՝
Զի հողեւ ընկերելոցս թէ անտանել կարիցէ
Որ ընդդէմ կայցէ կարգելոյ իւր ռոոխին հանդիպոյ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ունկըն դիր այսուհետև. քանզի և ոչ յակամայ
Ի խօսել յորդորես զիս, զի ես ինքնին իսկ կամիմ
Ըզսիրուն բարեկամաց զարգար ոգել գովութեամբս։
Տեսանես անդ ըզհըզօրն՝ որ 'ի նետէ շանթահար.
Դա ինքնին է Կապանեւս՝ այր բազմանչոխ ընչաւէտ,
Յօրացեալ ոչ պերճանօք իմաստութեան իսկ մտօքն՝
Քան զայր որ աղքատին ոչ ինչ ունէր աւելի։
Ի սատարել մորըզդայնելոյ 'ի մեծ խընճոյս՝ ըզդդուշ կայր,
Զբաւականն անարգէր. զի ոչ առաջ՝ ըզքարի
Ի կերակուրս, և ըզչափոյս պարկեշտութեան միշտ պաշ-
Բարեկամ էր ճըշմարիտ հեռաւորաց և որ մերձ. (տեսաց։
Անպաճոյճ և 'ի բարուց, քաղցրահամբոյր և ողջ.
Առ ծառայս ոչ ինչ ընդհատ որպէս առ այլս որքայն։—
Զեւտէոկլ աստ երկրորդ՝ յայլ լաւութիւնս անձնատուր,
Քաջասիրտ էր զա մանուկ և պարենիւ չըքաւոր,
Իւ յերկրին արգիական պատիւս բազում բառացեալ։
Ի բաշխել բարեաց անգամ նըմա ոսկւոյ սիրելեաց՝
Ոչ առնոյր յանձն երբեք, որպէս զի մի ըզբարոյս
Վարեսցէ 'ի ստրկութիւն՝ անկեալ ընչիցն ընդ լըծով։
Զանպիտանս 'ի մարդկանէ, ոչ ըզքաղաք դըլխովին՝
Ատեայր նա, զի ոչ լիցի քաղաք պատճառք ինչ չարեաց,
Եթէ ոչ չար համբաւով իշխան յասի ունիցի։—
Իսկ երրորդ Իպպոմեդոն 'ի սոցանէ կարգեցաւ.
Ի մատաղ անդուստ տիոց ոչ 'ի զըրգանս հեշտանէր
Հեշտութեան, կամ 'ի լըյծ վարուց փափուկ ցոփութիւնս։
Ի վայրի բընակութեան, տայր զինք խոշոր ինչ կենաց,
Յարութիւն զանձըն վարժէր, որսոց լինել հետամուտ.
Փըւընչէր երիւարօք, ձեռօք քարշէր լի զաղեղն.
Շայեկան մատուցանել ըղձայր զմարմին՝ քաղաքին։—
Իսկ միւսն Ատալանտեայ որդեակն է ծընունդ,
Մանուկ Պարթենոպէս, հրաշատեսիլ կերպարան.
Ի ծընէ արկադացի, եկեալ յափունս Ինաքայ
Ի յԱրգոս սընանէր. 'ի կիրթ վարժեալ անդանօր՝
Որպէս աւն օտարական արժան է նախ պանդըխտել,
Ոչ բեան էր քաղաքին և ոչ ամբք յաշաղեալ,
Ոչ բանից կագազարթայց՝ յորմէ անչուշտ այր օտար
Ատելի լիցի համակ որպէս բընիկ քաղաքին։
Բանակաց եղեալ գըլուխ՝ իբրև ծընունդ արգիացի.
Մարտընչէր յերկրին վերայ. 'ի պերճանալ քաղաքին՝
Ի սըրտին խընդայր, տայր 'ի ձախողանս՝ տրխատէր։
Տարփելիք բազումք էին նորա յազգէ և կանանց,
Յոր ամբիծ ըզմըրրութիւն պահէր անխախտ 'ի յոգւոջ։—
Ի կարճոյ և ըզՏիդեայ պարծանս եդից մեծամեծն.
Ոչ 'ի խօսս էր հոյակապ՝ այլ յասպարէզ առաւութեան,
Իմաստուն հընարագիւտ՝ որ ստեղծանէր բան բազում.
Ի հանճարն էր պակասեալ քան զեւրն եղբայր Մելեագրոս,
Ի համբաւ քաջութեան զինուց նըմին հաւասար,
Որ ըզպերճ և զճըշգրիտ հնարեաց արուեստ զինական,
Ի բարուց էր փառասէր և զգօնամիտ խոհական։—
Ի բանից աստի յայպուշ հարցիր Թեսևս ըմբռնացեալ.
Յառաջէս աշտարակաց խիզախեցին այսք 'ի մահ։
Իւ ամօթ իսկ 'ի վերայ ամենն բարի հըրահանգք.
Քաջագործ այր զամօթի հարեալ դընի նըշաւակ՝
Թէ վատթար երևիցի. զի քաջութիւն իսկ մարդէ,
Զերդ մանուկ ուղխեղծ զուատ որոց չգիտեն՝ վարժիցի,
Զի գիտէ անվըլթար կալ 'ի յոգւոյ զոր ուսաւ.
Յաւագոյն. այսպէս քաջ զաղղեակս, ո՜վ հարք, սընուցէք։

ԳԱՐ

Ո՜վ որդեակ, ծընունդ թըշուառ.
Երկամբք յըղւոյ՝ յարգանդիս
Տարայ ըզքեզ մեծ ցաւովք.
Արդ ըզպըտուղ իմ վըշտացս
Առ և գընաց տարտարոս։
Զունիմ ինձ զոք ծերացեալ
Մայր հէք ծընող որդեկիս։

ԹԵՍԵՒՍ

Ըզզաւակ քաջակորով և պանծալւոյն Ոյիկլեայ,
Կենդանւոյ 'ի ստորինս շըրթեալ տարեալ աստուածոց
Ինքնին քառաձիովք՝ ըզերգ լըսուն գովութեամբ։
Ըզդուստրն Իդիպոսի, զՊոլինիկեայ բարբառիմ,
Զոր արժան է ճըշմարտիւ գովել անսուտ պանծանօք.
Ապաստանեալ էր ինձ նա մինչև լըքեալ ըզԹեբէս
Փախըստեամբ կամակարուց գընալ յաքսոր 'ի յԱրգոս—
Գիտիցես թէ զի՞ զոսա առնել կամիմ աստանօր։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ըզմի զայդ գիտեմ միայն՝ հընազանդել բանից քոց։

ԹԵՍԵՒՍ

Ըզհըրով շանթահարեալն յԱրամազդայ Կապանեւս...

ԱԴՐԱՍՏՈՍ

Մեկուսի՞ յայլոց կամիս թաղել ըզդին նուիրական։

ԹԵՍԵՒՍ

Այո, և զմնացեալսն 'ի մի հըրատ խարուկել։

ԱԴՐԱՍՏՈՍ

Իւ ո՞ւր ամբառնայցես նըմա շիրիմ զատուցեալ։

ԹԵՍԵՒՍ

Առ նոքիմբք ապարանիւք, զետեղեցից անդ շիրիմ.
Մառայից արքայնեկաց հող խընամոյ լիցի դա,
Իսկ նոքա առ մեզ յանձն. գաղաղքն յառաջ մատիցին։

ԱԴՐԱՍՏՈՍ

Եկա՛յք աղէ, մա՛րք չըւառք, մերձեցարուք յորդիս ձեր։

ԹԵՍԵՒՍ

Ո՛չ արդեօք, Ադրաստէ, ոչ ինչ 'ի դէպ ասես զայդ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Իւ զի՞արդ. չիցէ՞ արժան մարց զիւր որդիս շօշափել։

ԹԵՍԵՒՍ

Ի տեսիլ մոխրեալ մարմնոց անկանիցին նըւաղեալք.
Առ իմէ՞ և զայս թախիծ ցանկաս նոցա յաւելուլ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Յաղթեցեր, Թեսեւս. աստէն կացցեն կանայք տառա-
(պեալք.
Ի խարոյկ յորժամ դիցուք, կանայք, զմարմինս մեռելոց,
Զոսկերսն տարայք 'ի բաց, — ո՜վ հեծեցեալ մահացուք.
Առ ինչ 'ի զէն միշտ վառիք՝ միմեանց արեամբ ծարաւի.
Դըլացէք, դադարեցէք. 'ի վտանգաց հանգերուք.
Քաղաքի լերուք պաշտպան, խաղաղութեան անդորրու.
Կեանք մարդոյ՝ գոյղն ինչ է. պարտ է հեշտեաւ վարել
(զայն։

ԳԱՐ

Ոչ բաղերդի, քաղաղաւակ,
Ի բարեբաստ կենաց անմատն
Մանկածընունդ արգիուհեաց.
Ոչ Արտեմիսըն ծընուցիչ
Բարբառեսցի առ անորդիս.
Տառապագին կենացս պայման.
Իբրև ամպոյ պէս ցիր և ցան՝
Ի մըըրկայոյզ հողմոց վարեալ։

ԳԱՅԱՍԽԱՆԻ

Նուիրեանք եօթեանս ծընեալ որդիս
Քաջազարմիկ յարգիացիս.
Արդ անորդի և անզաւակ
Զառամեցեալ եմ ես պառաւս.

digitised by A.R.A.R.@

Ու 'ի համար ինչ գնացելոց
Եւ ոչ թըւեալ 'ի կենդանիս.
Ո՞ր բաղդ է ինձ հասեալ վիճակ։

ՄԱԿԵՐԳ

Մնան եւեթ արտասուք
Ինձ եղկելւոյս. և 'ի տուն՝
Դամբան մանկանս կայ արձան.
Այս յուշարարք սգաւոր,
Եւ ծամք փարսից գանգրահերք,
Նուէրք դիոց անշընչից.
Աշխարհական լալականք՝
Զոր ոսկեվարսն Ապոլոն
Ապախտ առնէ զըլացեալ։
Առաւօտէ նա յայնժամ,
Ըզպարեգօտն ես առ կուրծս
Պընդեալ կըրկին խոնաւուս,
Ոռոգեցից արտասուօք։
Անդ ըղձարոյն նըշմարեմ
Նուիրական Կապանեայ,
Եւ դաշնամուռս մեռելոց
Յապարանից Թեսէւսի.
Եւ չանթահար մեռելոյն
Մերձ զԵւադնէ կինն շըքեղ,
Զոր սերմանեաց Իփիս պետ։
Ընդէ՞ր 'ի ժայռն օդային
Ել 'ի կատար, և եկաց։

ԵՒԱԴՆԷ ի վերայ խարուկանդակի· ՊԱՐ·

ԵՒԱԴՆԷ

Զի՞նչ ճառագայթս, զի՞ր նըշոյլ
Կառավարեաց օրըն այն.
Զահ ընդ եթեր էր լուսին,
Յաւերժհարսամբք երագոտն՝
Զիաւորեալ ընդ մըռայլս.
Իմոց յայնժամ հարսանեաց,
Յաւէժական խընծղանաց՝
Արձանացոյց երգս Արգոս,
Պըղընձազէն Կապանեայ։
Վըտարանդի 'ի տանէ
Արդ մոլեգնեալ գերդ չամբուշ
Ի բոց հրատին ընթանամ
Վազեմ 'ի նոյն գերեզման.
Զերկունս լուծեալ 'ի դըժոխս
Զյաւիտենիս տառապանս։
Քաղցրագոյն է մահ անշուշտ,
Գոլ սիրելեաց մահակից,
Թէ աստուածոց է հաճոյ։

ՊԱՐ

Տեսանե՞ս ահա զխարոյկ՝ յոր կաս եկեալ 'ի գըրուխս,
Գանձարան Արամազդայ, ուր պարփակեալ է քոյին
Ամուսինդ՝ 'ի չանթային փայլատականց ընկըճեալ։

ԵՒԱԴՆԷ

ԳԱՅԱՑԻԱՆԻ

Ի բարձանց աստի
Ըզմահս տեսանեմ.
Այլ բաղդն իմ ասիցէ
Եղէ առաջնորդ.
Արութեամբ ոգւոյ՝
Վազեցից ոստմամբ
Յապառաժ վիմէն
Անկանիցեալ 'ի հուրն.
Ի բոց ատրաշէկ
Խառնեցայց սիրուն
'Ընդ ամուսնոյս մարմնոյ
Գիրկ ընդ գիրկ պըճնով.
Ի Պերսեփոնեայ
Երթայց հարսնարան.
Եւ ոչ 'ի մահուն
Անջատայց 'ի քէն։
Ողջո՜յն անկողինք
Ողջո՜յն և արևս.
Ի մանկունս Արգեանց
Իցեն սուրբ աղերսք.
Ծընկասէր փեսայ
Սուրբ սիրով տարփեալ
Յօդեսցի անքակ
Ընդ իւրում հարսին։

ՊԱՐ

Աւասիկ սա Իփիսն հայր քո եկեալ մատչի աստ
Ծերունին Իփիս՝ նորոց իրացս ալեծուփ 'ի խնդիր.
Զոր լըւեալ անշուշտ 'ի սիրտ իւր խոցեսցի կարեվէր։

ԻՓԻՍ, ԵՒԱԴՆԷ, ՊԱՐ.

ԻՓԻՍ

Ո՜վ թըշուառ, և ես Իփիսն թըշուառագոյն ծերունիս,
Ի կըրկին հասանեալ աւագ եկեալ կամ աստ առ 'ի դէպ.
Ըզմեռեալ որդին կադմեանց սըրախողխող պատանին
Զեթեոկլ 'ի հայրենիս կամիմ անդրէն ածանել.
Եւ ըղդուստրս իմ որոնեմ, որ չիք լեալ 'ի տանէս
Ընթանայր սատարելով հաւանընկերն Կապանեայ,
Ընդ նըմա ցանկայր ըզմահ. զի յառաջին վաղագոյն՝
Փախչէր ըզնա 'ի տանէ. այլ 'ի չարեացս հասանել
Թոյլ ետու պահպանութեան, 'ի բաց չոգաւ փախըստեայ.
Աստանօր կարծեմ թէ է, գիտէք անշուշտ, դուք կանայք։

ԵՒԱԴՆԷ

Զի՞նչ սոցա հարցանես. 'ի ժայռս աստ աւասիկ
Թըռչնոյ հանգունաստեղ 'ի խարուկին Կապանեայ
Վերամբարձ ողորմելիս թեւթեւեալ կամ, ո՜վ հայր։

ԻՓԻՍ

Ո՜վ որդեակ. զի՞նչ է հողմս, զի՞նչ պատմուճանք, և առ (ի՞նչ,
Ըզտուն թողեալ 'ի յերկիրս աստ փախուցեալ հասեալ (կաս։

ԵՒԱԴՆԷ

Խորհըրդոց իմոց արդեւք՝ լըւեալ հասու լինիցիս.
Այլ լըսել քեզ առ յինէն զայս ոչ կամիմ, ո՜վ հայրիկ։

ԻՓԻՍ

Եւ զիա՞րդ, ո՞չ արդար իցէ գիտել զայս հօր քոյ։

ԵՒԱԴՆԷ

Դատաւոր ոչ իմաստուն իմոց մըտացս լինիցիս։

ԻՓԻՍ

Այսոքիւք սեթեւեթիւք զմարմինդ ընդէ՞ր պըճնեալ ես։

ԵՒԱԴՆԷ

Այդպիսի փերեւերտանք յաքնալ ինձ, հայր, գուշակեն։

ԻՓԻՍ

Ընդ մեռեալ ամուսնոյդ մի ըղձալեալ ինչ իցես։

ԵՒԱԴՆԷ

Ի գործ մի աքանչելի կազմ և պատրաստ եմ ահա։

ԻՓԻՍ

Առ ի՞մ կաս մերձագոյն այդր 'ի խարոյկ ու 'ի շիրիմ։

ԵՒԱԴՆԷ

Քաջայաղթ եմ աստանօր երեւեցայց արութեամբ։

ԻՓԻՍ

Որպիսի՞ յաղթութիւն տարեալ, կամիմ ուսանել։

ԵՒԱԴՆԷ

Կանանցս բոլորեցունց, որոց զարե տեսանեն։

digitised by A.R.A.R.@

ԻՓԻՍ

Արգեամբք Աթենացւոյ, թ' իմաստութեան խորհրդովք։

ԵՒԱԴՆԷ

Արութեամբ զի ընդ առն իմում հանգեայց մահակից։

ԻՓԻՍ

Զի՞նչ խօսիս. զի՞նչ առեղծուած օտարոտի ինձ ասես։

ԵՒԱԴՆԷ

Սլացայց 'ի խարոյկ իմ սիրելւոյն Կապանեայ։

ԻՓԻՍ

Ո՛վ դուստր իմ՝ մի՛ զայս հանդէպ ամենեցուն բարբառ-
(եսիր։

ԵՒԱԴՆԷ

Զամենայն Արգիացիս կամիմ գիտել զայսոսիկ։

ԻՓԻՍ

Այլ գործել զայս անհընար է ինձ թողուլ քեզ բնաւ։

ԵՒԱԴՆԷ

Ի զուր. և ոչ ըղձեաս իմ կարասցես արգելուլ.
Մարմին իմ աճապարեսցէ. թէպէտ չիցէ քեզ սիրուն,
Եւ ոչ ինձ և ոչ 'ի հաւր աճիւնացեալ ամուսնոյս։
(Արձանէ զինքն 'ի խարոյկ Կապանեայ առն իւրոյ)։

ՊԱՐ

Քանի՜ն գըժընդակ գործ ժըպըրհեցար, ո՛վ կին դու։

ԻՓԻՍ

Կորեայ չուառականս, արգիացւոց ո՛վ դըստերք։

ՊԱՐ

Ե՛ է. ինձ ցաւագնոյս,
Սարսափելի տեսի գործ։

ԻՓԻՍ.

Ո՞վ գտցի որ խոլագոյն քան զիս գտանել մարթասջիք։

ՊԱՐ

Ո՛վ եղուկդ. դու Իփիսեայ
Բաժնին եղեր բաժանորդ,
Եւ դու քաղաք իմ վատթար։

ԻՓԻՍ

Ո՜հ զի՞արդ չիցէ մարթ և այս հընարք առ մարդկան,
Երկիցս մանկանալ և ծերանալ միւսանգամ։
Զի թէ ինչ յառաջագոյն բարեաւ չիցէ աջողեալ
Յերկրորդում ապա նուագի ուղղեալ կարգեմք գեղեցիկ.
Ու այսպէս և կեանք մարդկան. եթէ էաք մանկացեալ
Երկրորդուստ և ծերացեալք, և թէ որ ինչ սխալէր՝
Ի կրկին կենաց դիպեալ զայն ուղղէաք արդարև։
Զի տեսեալ իմ զայլ մարդիկ՝ որդիս ծնանել և սիրել՝
Ցանկացայ ունել որդիս և ծիւրեցի առ սիրոյն։
Թէ հընար էր ինձ յառաջ ըղձորդ առնուլ հեծութեանց
Զոր հայր որ ըղձացեալ յիւրոյ որդւոյն մեռանել,
Ի չարիս ինչ այսպիսի չէր իմ լինել ձեռնամուխ.
Մանուկ մի հրաշալի սերմանեցի յաշխարհի,
Այժմիկ աճապարիկ 'ի նըմանէ իմ թափուր։
Զի՞նչ արժան է եղկելւոյս այսուհետև գործել ինձ։
Դարձ 'ի տուն իմ արարից. զամայութիւն անդ տեսից
Յոգնահոյլ սենեկաց, և տառապանս կենցաղոյս.
Թէ 'ի յարկս այն Կապանեայ 'ի խորս գընալ խլեսցից.
Քաղցրագոյն էր անդ երբեմն յառաջագոյն զըւարթին իմ.
Ուր եւ ե՛նա, որ 'ի շըրթունս զայսոս իմ հըպեալ մածանէր,
Ըզգըլուխ իմ շօշափէր. զի հօր ուսիք ծերունւոյ
Քան ըզդուստր չէք ցանկալի. զի ուստերաց են ոգիք
Ի մեծամեծս քաջազնէաք, և ոչ քաղցրունք 'ի գըգուանք։ —
Հիմ փութով զիս ոչ տարայք հանէք տուն յապարանս,
Դիք 'ի վայր խաւարչտին, զի անսըւաղ անճաշակ՝
Ըզհնացեալ մարմինս ծիւրեալ խաղաղաբար կորիցեմ։
Յոսկերաց որդւոյս իմոյ զի՞նչ ինձ օգուտ գործիցի։
Ծերութիւն գըժոխըմբեր, որչափ ատեամ ես ըզքեզ.
Ատեամ խոկ և ըզնոսա որ զկեանս ճըգնին յերկարել
Ըմպելեօք և անկողնօք և ըղձութեանց հըմայիւք.
Զի պարտ էր խոկ նոցա՝ յորժամ չիցեն ինչ 'ի պէտս՝
Կորընչել երթալ մահուամբ, մանկանց խափան մի լինել։

ՄԱՆԿՈՒՆՔ ԱՐԳԻԱՑԻՔ՝ որ բարձեալ բերեն զաճիւն հարց իւրեանց. ԹԷՍԵՒՍ, ԱԴՐԱՍՏՈՍ, ՊԱՐ.

ՊԱՐ

Մանկանց աւաղ, մեռելոց
Ոսկերք. բարձէք, աղախնայք,
Ըզկըթուցեալ ծերունիս,
Զի 'ի սըգոյ որդեկաց՝
Կընաց 'ի մէնջ զօրութիւն,
Ժամանակաց բազմութեամբ
Յաճախագոյն և վըշտօք։
Զի՞նչ մեծագոյն քան զայս կիրս
Ի մահացուս կըրիցի։

ՄԱՆՈՒԿ ՈՔ

Կըրեմ կըրեմ, հէք մայրիկ,
Ի խարուկէ զանդամս հօր,
Աւ 'ի ցաւոց ծանրաբեռն,
Զբոլոր խառնեալ 'ի մի կոյտ։

ՊԱՐ

Արտասուք ածես, վա՜յ ինձ, վա՜յ,
Կորուսելոյ մօրն 'ի սուգ.
Ի դոյզն մոխիր ամփոփին
Մարմինք քաջացն 'ի Միկենս։

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Բա՜յէ, թափուր 'ի հօրէ,
Որք՝ յամայի նըստայց տան,
Ու ծընողիս իմ 'ի ձեռս։

ՊԱՐ

Ո՞ւր են վաստակք իմ որդւոց,
Ո՞ւր հոգք հըսկուն խընամոյ,
Եւ մօր սընունդք, անքուն աչք,
Սիրուն գըգուել երեսաց։

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

Մեռան որդիք քո, ո՛վ մայր,
Զըւեալ գնացին ընդ եթեր.
Լուծեալ յաճիւն 'ի հըրոյ՝
Թռուցեալ իջին 'ի դըժոխս։

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

Լըսես զորդւոց ըզվայս, հայր.
Ասպար 'ի ձեռս իմ առեալ՝
Ըզվըրէժ հօրս խընդրեցից։

ՊԱՐ

Եղիցի՛ այդպէս, մանուկ։

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

ՊԱՏԱՍԽԱՆԻ Բ.

Արդարութիւն հասցէ ինձ.
Արդեւք նընջէ՞ նըրսին իմ։

ՊԱՐ

Վիշտ մեծարեան կայ զինեւ։

ՄԱՆՈՒԿ

Պըղընձագէն Դանայեանց
Զօրագըլուխն իցէ ինձ
Վըրէժխընդիր արեան հօր։

digitised by A.R.A.R.@

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

Ըղձայր իմ առաջի
Աչացս թուիմ տեսանել ։

ԳԱՐ

Ցայտումն համբոյր ինչ տուեալ ։

ՄԱՆՈՒԿ

Բանիցդ մեղմերգ բազմակայս
Վայրավատին ցնցգին յօդս ։

ԳԱՐ

Ցաւըս կըրկին թողեր մօր.
Ու ցաւք երբեք հայրենիք
Ու քեցեսցին 'ի սըրտէդ ։

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

Ճընշիմ ծանու այս բեռամբ ։

ԳԱՐ

Աղէ զլանջօքս իմ զամփիւնդ
Թողէք զընդել սիրատենչ ։

ՄԱՆՈՒԿ

Ընդ լուր ձայնին արտասուեմ
Փըղձկեալ սըրտիւ առ ցաւոցս ։

ԳԱՐ

Մեռար, որդեակ, ոչ ես ինձ մարթ՝
Պըշնուլ յերեսս մօր գողտրիկ ։

ԹԵՍԵՒՍ

Ադրաստէ, և դուք կանայք յարգիացուցըն զարմ,
Ի մանկունս հայեցարուք՝ որ են բարձեալ յիւրեանց (ձեռս,
Ընծըլխարս սիրելեաց հարցըն իւրեանց ադեղեաց ։
Այսոցիկ ընծայատուք եմ ես և քեզ, և քաղաքդ.
Ի յուշի դուք կալարուք զայս անմոռաց երախտիս ։
Եւ յաճախ զայս յեղյեղեմ ամենեցուն եւ ըզբան
Ի պատուի ըզ քաղաքն ունել, և տալ զայն որդւոց
Ցուցարար յիշատակի՝ որոց գայցեն ըզկընի ։
Արամազդ լիցի վըկայ և որ յերկինս են աստուածք,
Թէ զինչ զիարդ մեծապատիւ եղէք 'ի մէնջ մեծարեալք ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Զամենայն՝ զոր արութիւն ցուցեր յերկրին դու Արգեանց
Գիտեմք քաջ, ով Թեսեւս, ունիմք չընորհ անըսպառ.
Զի բարիս զըտեալ ումեք՝ պարտի անդրէն փոխարէնս ։

ԹԵՍԵՒՍ

Զինչ գործել արժան է ինձ առ օգտակար լինել ձեզ ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ուրախ լեր. զի արժանի ես դու և քոյդ իսկ քաղաք ։

ԹԵՍԵՒՍ

Ապաքէն և դու նոյին վիճակեսցիս իսկ բաղդի ։

ԱԹԵՆԱՍ (Երեւի)

Լուր, Թեսեւս, Աթենասայ բանից անսա պատգամաց.
Զինչ արժան առնել է քեզ առ 'ի նըպաստ քաղաքիդ ։ —
Ու փութով այսոցիկ տացես յասանդ զոսկրոտին,
Ի յաշխարհ արգիական բառնալ տանել ընդ իւրեանս ։
Փոխանակ քոյոց համբուն և քաղաքին արկածից՝
Ցերդմընի լինիջիր նախ. ըզնոյն երդնուլ է ըմբոն
Ադրաստեայ՝ որ իշխան և տէր է աստ բըռնակալ.
Բովանդակ Դանայեցւոց կըրել զերդումն է արժան ։
Այս երդումն իցէ նոցա՝ զի մի Արգեանց ինչ երբեք
Ի յերկիրս յարուցանել յայս ըզճամբար թըշնամի,
Եւ յայլոց լիցին արգել վառել 'ի զէն և 'ի զօրդ ։
Թէ դաշինս այսմիկ զըրժեալ զըռոյթ յաշխարհըս դիցեն,
Դու զերկիր Արգիացւոց սուր ըընաջինջ կորընչել։ —
Ի նըմին բազանդ ինչ քեզ պարտ է հանել, լուր դու ինձ.
Ցապարանս քոյ կայցէ եռոտանի պըղընձեայ,
Զոր երբեմն յիլիոնի հիմն 'ի յարև տապալել
Ընդ կըրուկն գառնեալ անդուստ եւ քեզ նըւէր Ալկիդես,
Ի սեղան՝ զոր դու ապա ձօնիս եղեր առ Պիւթեանն ։
Զերեցունց ապա գառանց ըզպարանոցս փողոտեալ
Ի խորւոջ եռոտանւոյն այնմիկ զերդմունսըն գըրեա։
Ի պահեստ տուր աստուածոյն. որ ըզԴելփիս իշնամէ,
Ցիշատակ դաշանց ուխտի, վըկայութիւն Եղլադայ ։
Փողոտեա այնու զըսպանդս և ծայր 'ի ծայր յօշոտես,
Ըզսուսերըն սըրածայր յերկրին 'ի խորշ մի ծածուկ՝
Առ եօթամէք խարուկօք ըսպանելոց թաղեսջիր ։
Ի նոցա ահ և երկիւղ. թէ այսր երբեք արշաւեն
Արհաւրօք և չարաբաստ դարձցին անդրէն առ իւրեանս,
Զայսոսիկ քեզ արարեալ յերկրէ արտաքս հանդըզդին.
Եւ յատակն՝ ուր մարմինք նոցա անկան մահացեալ
Սըրբեսցի հուրբ 'ի չաւիղս իսթմիական աստուածոյն ։ —
Ոգեցի զայս քեզ. արդ՝ Արգեանց մանկանցդ ասացից. —
Քաջարար վարեալ զաւանն իսմենոսի յաղթուս դէք,
Ըզհարցըն մեռելոց խընդրեալ վըրէժըս մահուն ։
Փոխանակ հօր քո և դու, Եգիալեւս, զօրավար
Նոր կացցես հօրամոյն. որդի՝ եկեալ յԷտոլեանց
Տիդեւսի՝ զոր հայրն իսկ իւր Դիոմեդէս յորջորջեաց ։
Այն ինչ զեռ տեղք 'ի ծընօտս ծաղիկ մօրուացն արձա-
Ըզբանակ պղընձապատ Դանայեցւոց խըմբեսջիք (կեալ
Ի վերայ Կադմեացւոց եօթնապարիսպ դըղեկին ։
Անհնարին ածջիք նոցա մահ՝ զերդ կորեանց առիւծուց.
Ցեռանածինք կոչեսջիք դուք 'նդ Եղլադատան համօրէն,
Ի նըւազս առջիք երգոց յորոց ըզկնի ձեր գայցեն.
Օրինակ զայս աստուածոյք լիջիք հըղօրք 'ի մարտի ։

ԹԵՍԵՒՍ

Պատգամացըդ մըտադիւր անսամ, տիկին Աթենաս.
Դու յուղիղ արդեօք զիս անես՝ զի մի թիւրեսցայց.
Ցերդմընի կընքեմ արդ զայս, միայն՝ զի դու օգնեսցես.
Ի լինել մեզ 'ի թիկունս՝ քաղաքս յամրի պահեսցի ։

ԳԱՐ

Երթիցուք մն, Ադրաստէ.
Ուխտի երդումն կընքեսցուք՝
Քաղաքիս և Թեսեսի.
Զի իւրն փոխան վաստակոց՝
Է արժանի պաշտաման' ։

---

Թարգմ. 'ի բնագրէն Հ. Արսէն Սուքրիան

1 Այս Աղէքսանդրը Ողբերգութիւնս Եւրիպիդեայ, առանձին տպա-գրութեամբ ոչ 'ի լոյս ընծայեալ է.

ՎԵՐՋ

digitised by A.R.A.R.@